Արձանագրություն N 2

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-68 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան **«03» «11» 2026թ. ժամը 11:00**

Մասնակցում էին՝

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի պետի պարտականությունները կատարող Ի. Սաֆարյանը -հանձնաժողովի նախագահ,
ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի առաջատար մասնագետ Հ. Հովհաննիսյանը -գնահատող անդամ,
ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի ճարտարագետ Լ. Կարապետյանը -գնահատող անդամ,
ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Է. Մնացականյանը -գնահատող հանձնաժողովի քարտուղար

Օրակարգ՝

ՀՀ ՆԳՆ կարիքների համար խողովակային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-68 ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստում արձանագրվեց.

1. ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-68 ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետին էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը:

Չափաբաժն ի համար	Ձրաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	[illegible]	125000	44830	20 %	53796	44830	20 %	53796.00	
2	1	[illegible]	151000	100000	20 %	120000	100000	20 %	120000.00	

1. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

Մասնակցի ներկայացրած հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, ծրագրի կողմից ճանաչվում է որպես վավեր և համակարգը թույլ է տալիս բացել հայտերը:

2. **Տվյալներ հայտերի ուսումնասիրման և գնահատման մասին.**

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-68 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից՝ «ՌԵՎԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, որտեղ արձանագրվել է անհամապատասխանություն, որը ենթակա է շտկման.

Մասնավորապես՝ «ՌԵՎԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում անհրաժեշտ է հստակեցնել տեխնիկական բնութագրում ապրանքի՝ ֆիրմային անվանումը, արտադրողի անվանումը, մակնիշը և ապրանքային նշանը:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-68 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման նիստը կասեցվում է 1 աշխատանքային օրով և առաջարկվում է «ՌԵՎԱՆՇԻՆ» ՍՊԸ-ին 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Սաֆարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Հովհաննիսյան

Լ. Կարապետյան

Քարտուղար՝ Է. Մնացականյան